



## ԿՐՈՆԱԿԱ ՊԵՏԱԿԱՆԻ, ԸՆԴԵՒՔՆԱԿԱ, ԵՎ ԽԵՐՈՅԵԿԱ.

ԹԻՒ Դ. — ՀՅԶ. Ա. Ե.

1872

ՏԱՐԻ Դ. — ԱՊՐԻԼ 30

### Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ԴԱՍԱՑՈՒԹԵԿԱ ԿՐՈՆԱ.

(Հայուսական և Հայուսական պատճենագիրների մասին)

ԱՍՏԱԿԱՆ ԱՇԱԽԱՏԱԿԱՆ ԱԽԱԿՈՒՄԸ.

Գ. Առան յաջորդող երրորդ շրջանը  
չորրորդի հետ միասին, որ սահմանուած  
է վերջին երկու տարիների համար, յատ-  
կապէս գործ ունին Եսպուածաշնչի սուսան  
հետ։ Երրորդ շրջանում աւանդվում են  
Սուրբ Գրի առաջարկ և առաջարկ իսկ չորրոր-  
դումը ուսուցանում են նոյն իսկ Եստուա-  
ծաշունչը իւր վերայ։ Աւր որ արգել-  
ւած է Առւրբ զբքից քաղուած առնելը,  
այն տեղ ուսուցիչը նշանակում է աշա-  
կերտաց համար Եստուածաշնչի աւելի  
զիւրին հատուածներ, այս ինքն՝ ինքն է  
առնում այն՝ ինչ որ պէտք է առներ քաղ-  
ւածոյների հեղինակը։ Եստուածաշնչի  
ուսման այս կերպով ուսուցանելու յատ-  
կութիւնը կերպարանք է առնում անցեալ

շրջանների համեմատութիւնից։ աշա-  
կերտին աստիճան առ աստիճան տանելով  
գէպ ի Եստուածաշնչի պատմութեանց  
հասկացողութիւնը, մշակելով այդ պատ-  
մութիւնները իւրեանց փոխադարձ կա-  
պակցութիւնների և նոյն իսկ աշակերտի  
կեանքի մէջ։

ա. Եյս նպատակի համար՝ Եստուա-  
ծաշնչի պատմութիւնը շարունակվում է  
մի աւելի ընդարձակ չափով, այնպէս որ  
նորա զանազան պատմութիւնները միա-  
ւորուած լինում են Յիսուսի յայտնաւելան  
մտի պատճեններ։ դուրս է երեւում Հին  
Կտակարանի մէջ կրօնի սկզբնական բող-  
բոջը և նորա գերազանցութիւնը հեթա-  
նոսութեան յառաջ։ կենդանի նկարնե-  
րով պատկերանում է մարդկութեան բա-  
րոյական անկումը, որի վերականգնելուն  
կարեոր եղաւ Յիսուսի շնորհատու Յայտ-  
նութիւնը և Նորա սուրբ արիւնը, ինչ-  
պէս նոքա յայտնի դուրս երեւեցան քրիս-  
տոնէից կեանքի մէջ։ Եյսպիսի եղանա-

կաւ Աստուածաշնչի պատմութիւնը եկեղեցական պատմութեան կարգն անցնելով յարաբերութիւն է ստանում և աշխարհային պատմութեան հետ : Դարձեալ համեմատութիւն է անվում բոլոր պատմական անձանց մէջ, և երեխաների հոգւոյ դրութիւնը լուսաւորվում և ուղղութիւն է ստանում : Արօնական և բարոյական ծշմարտութիւնների եղբակացութիւնը, որ քաղվումէ օրինակներից՝ լինում է մի պատրաստութիւն շուտով սկսանելի հաւատոյ ուսման : Դարձեալ շարունակվում և աւելի բարձրաստիճանի է հասնում անցքերը ընդհանուր հայեացքի տակ առնելը, և չէ ընդհատվում Առւրբ Գըրքերից օրինակների յառաջբերութիւնը :

Է. Աստուածաշնչի քաղուածները ըստէտք է սահմանափակվին միմիայն պատմական նիւթով, այլ պէտք է ուղղուած լինին դէպ ի այն ծշմարտութիւնքը, որոնց վերայ հիմնվում է պատմութիւնը : Այս առաւելապէս վերաբերում է Կոր Աստակարանին — Փրկչի խօսքերին և առակներին : Առցանց փոքր ի շատէ գիւրինները ընդունվում են այս շրջանի մէջ և բացատըրվում : Առցանց խօրին իմաստը պէտք է թողնել երեխաների ապագայ հասակի համար, բայց աշակերտի ուղղակի պարտքն է իմանալ թէ ի՞նչ է թողվում իւր համար ապագայում ուսանելու, և թէ եթէ կարելի է ինքն ըստ ինքեան մտաբերել նըրանց ժամանակին : Վրիստոսի առակներից ի հարկէ շատ սակաւները պէտք է թողվին այժմ նոցադժուարութեան համար, բայց Փրկչի խօսքերից էլ շատերը, մանաւանդ նրանք՝ որոնք վերաբերվում են Աստուածոյ արքայութեան նմանութիւն-

ներին, որովհետեւ այն խօսքերը կպարզւին միայն Յուդայի թագաւորութեան կործանումը պատմելու ժամանակը :

Դ. Եւ այսպէս երրորդ շրջանի նիւթերը շատ և շատ առատ են, բայց նոցամշակումը գժուարին է : Աշակերտները արդէն գտնվում են այն հասակի մէջ, երբ աշխարհը իւր հրապուրանքներով զօրեղապէս ներգործում է նոցա վերայ, ուստի և նոքա արդէն ոչ այնքան հնազանդութեամբ հաւատում և հետեւում են իւրեանց ուսուցչի խօսքին, նորա ազդեցութիւնը շատ և շատ թուլանում է կողմնակի ազդեցութիւններով : Ահա այս տեղ նշանաւոր է պահպանել նոցա մէջ բարի սերմերը, որպէս զի նոքա մինչև իւրեանց արմատաւորելը չչորանային արեգակնային խորշակից, կամ թէ որ չխեղզուէին նոքա վատթար բոյսերով . այս նպատակին կարելի չէ հասանել ստիպելով, որ նա որքան կարելի է շատ անդիր անէ : Թաէկ ապագայ հասակում նրան ախորժելի կլինի կրել իւր հասկացողութեան մէջ Աստուածաշնչի ասացուածներ և երգերի գանձը, սակայն փոքր՝ բայց յաճախ գործադրուած գանձը աւելի թանկագին է քան թէ մեծը և անդործադրելին : Ուսուցիչը իւր բոլոր ջանք ի գործ պէտք է զնէ նորա համար, որ արմատացնէ տշակերտի հոգւոյ մէջ այնպիսի բարձր համարութն Արբազան գրուածոց և կրօնի մասին, որ նա կուսանի ակամայ, կամ հասարակեալ կարգը պահպանելու մաքով . ինչ տեղ արգելուած է Աստուածաշնչի տապեալ հաւաքածուների գործադրութիւնը, այն տեղ յատկապէս ուսուցչին հարկաւոր է առանձին կարողութիւն ընտրել Աստուածաշնչից հատ-

ւածներ ընթերցանութեան համար և կապ հաստատել նոցա մէջ : Առանց այսպիսի ընտրութիւն առնելու Աստուածաշնչի ընթերցման համար՝ հարկաւոր կրթիներ բաւական շատ ժամանակ . կարելի չէր լինիլ բովանդակութիւնների խառնուածքիներմուծանել մի որպիսի և իցէ մանկավարժական կարգ, և կանչետանար նոյն իսկ զրաւողականութիւնը, այս պատճառաւ շատ հարկաւոր է կարողանալ հաւաքել ընթերցանութեան համար նրանցից աւելի հետաքրքրականը՝ աւելի խրատականը և ամենահասկանալին, և ապա ի բաց թողուածները լրացուցանել համառօտ և պարզ բառերով . նոյնպէս և զանց առնել նոցա ըստ բովանդակութեան և ըստ տեսակին նկատելի բոլոր անյարմարութիւնները . ինչ որ ամեն հանդամանքներում անպատշաճ են ընթերցանութեան՝ պէտք է անցնել համառօտապիս: Այսպիսի եղանակաւ կարող կլինիս ծանօթացնել երիտասարդներին ամբողջ սրբազն պատմութեան հետ:

Մի քանի ուսուցիչներ աշխատում են Աստուածաշնչի այս կամ այն պարզ պատմութիւնների, առաւ ելապէս Քրիստոնէական Ատրդապետութեան հրահանդների ցամաքութիւնը մեղմացնել իւրեանց կողմանէ աշխարհական պատմութիւններով, մանաւանդ թէ խրատական բովանդակութիւններով . կան այնպէս ամբողջ ժողովածուներ քրիստոնէական պատմութիւնների ասուածների. մենք յարգում ենք այս տեղ բարի դիտաւորութիւնը, և չենք ասում, որ պէտք է մերժել այդպիսի դըրքերը, սակայն առ հասարակ սխալ ենք համարում այդ հնաբքը . Աստուածաշ չէ

պատմութիւնների հետ այդպիսի պատմութիւններ յաւելացնելը նուազեցնում է առաջինների յարգը, որոնք յայտնի են իւրեանց անարուեստ բնականութիւնովը, մինչդեռ ինչպէս նոքա իւրեանց վիպասանութեամբ ներկայացրած անցքերումը՝ նմանապէս սոքա ևս զրաւում են ընթերցողի երեակայութիւնը: Արօնական երկար պատմութիւնները համարեա միշտ ձանձրութիւն են պատճառում, և երբեմն ևս ընդհակառակն զարթուցանում են մոլեռանդութիւն: Վերոյիշեալ հաւաքածոյ պատմութիւնների մի պակասութիւնը ևս նոցա չափազանց խստութիւնն է. մի նկարգրագրութիւնը մոռացնելով միւսին, նոցանից ոչ մինը չէ տպաւ որվում երեխայի հոգւոյ մէջ ամրապիս: Բայց սասաիկ յանդիմանութեան են արժանի այն աշխարհական պատմութիւնները իւրեանց ստուգութեան վերաբերութեամբ. հազիւ թէ ինքը հեղինակը կարողանայ երաշխաւորել գոնէ նոցանից մի քանիսի ծշմարտութեան համար. ի հարկէ այս ստուգութիւնը մենք չենք ել պահանջում բանաստեղծական զրուածներից. ծշմարիտն ասել, այդպիսի պատմուածները միւս բոլորից պիտանացու են: Եթէ առաջարկում են մեզ ներկայ ժամանակումն պատահած մի սքանչելի անցից պատմութիւն առանց ստոյգ և արժանահաւատ ապացուցի, մենք պէտք է հարցնենք, թէ ի՞նչպէս կարելի է համեմատել առաքելական հրամանի հետ: «Այնելիք, ամենայն հոգւոյ մի հաւատայք, այլ փորձեցէք զհոգիս, թէ յԱստուծոյ իցեն , , (Ա. Յով. Պ. 1). ինչ որ պատմում են քարոզիչները իւրեանց տըպագրեալ քարոզների մէջ, այն չէ կարելի

ընդունել իբրև զուտ ճշմարտութիւն, և հաւասարել Աստուածաշնչի պատմութիւններից շատերը յայտնի է, որ ծագում են ինքնամիրութիւնից: Այդպիսի պատմութիւնների ընտրողութիւնը պէտք է լինի ըզգուշութեամբ և ըստ ճաշակի, որովհետեւ դասատուութեան մէջ անվայել են անտեղի դատարկաբանութիւնները մանաւանդ կրօնականի մէջ:

Դ. Խնկ Աստուածաշնչում կարդաց սծտեղերի բայցարդութեան համար պէտք է ասել, որ ինչպէս ամենազդոցը կերպով հատուածների ընտրութեան ժամանակը չէր կարելի ի բաց թողնել և դժուարահասկանալիները, նոյնպէս և այստեղ պէտք է պահպանուի, և այն մեծ ճշդութեամբ, մեկնութեան սովորական կանոնները՝ ամենից յառաջ պէտք է կարդալ ուղիղ ձայնահարութեամբ, որովհետեւ սա զգալի ազգեցութիւն ունի մտքի վերայ: Ը առանդամ այս յարաբերութեամբ ուսուցչի կողմից ցոյց տուած մի փոքրիկ ուղղութիւնը աւելի օգտաւէտ է քան թէ անտեղի երկարաբանութիւնը, որը առհասարակ մեկնութեան անտանելի պակասութիւնն է. զլնաւոր գործը պէտք է լինի բնագրի անընդմիջաբար տպաւորութիւնը աշակերտի հոգւոյ մէջ. բայց այս իսկ անհետանում է թարգմանութեան ժամանակ ու մանց մեկնաբանների անտեղի երկարաբանութիւնը, որը ուրիշ օգուտ չունի բացի բացարկելի նիւթոց գորեղ և գեղեցիկ միտքերը լինել արագան պատմութեանց մէջ: Որպէս զի ուսուցիչը կարողանայ բացարկել համառօտ և ձիշդ, պիտոյ է ի հարկէ նա ինքը նախ հասկանայ բնագրի լինակատար միտքը. ով հմուտ չէ սորա մէջ, նա կուտակում է միմեանց վերայ շատ բառեր, և անհետ յաւելուածներով միայն մընացնում է բնագրի պարզութիւնը: Եւ որչափ այսպիսի անպատճաստ և անխորհուրդ երկարաբանութիւններ պատահում է մեղ լսել ոչ միայն ուսումնաբաններում, այլ և եկեղեցւոյ մէջ

յած մտաւ որապէս: Մեկնութեան գասատուական եղանակների անյարմարութիւնները բաց ի բնագիրը անհասկանալի կացուցանելուց՝ աշակերտներին ևս հասուցանում են մինչ ի յետին բթամըտութիւնն, որպէս զի Աստուածաշնչի մեկնութիւնները չձանձրացնեն երեխային, հարկաւոր է յաճախ փոխակերպել նոցա պատմողական եղանակը և ձեր ըստ յարմարութեան: Առհասարակ պէտք է կրօնի դասատուութեան ժամանակը նայել ձանձրութեան վերայ իբրև մի մեծագոյն թլշնամույ վրայ. հետաքրքրութիւնը աշակերտաց մէջ պահպաննելու համար պիտոյ է ուսուցիչը կարողանայ ամեն մի վերացական տեղեկութիւն ներկայացնել տեսառապէս, և այս պատճառաւ հասարակաց հասկացողութեան համար գործ դնէ ամենայարմարը և ամենազնիւը այն օրինակներից, որոնք կարող են յառաջ բերուիլ: Վեկի խրատական են նոյն իսկ Աստուածաշնչի օրինակները. նոքա ազնիւ են, նոքա բղնում են սուրբ աղքեիւրից և համապատասխանում են բացարկելի նիւթոցն, և զօրեղ կերպով զրդուում են աշակերտին միջամուխ լինել արագան պատմութեանց մէջ: Որպէս զի ուսուցիչը կարողանայ բացարկել համառօտ և ձիշդ, պիտոյ է ի հարկէ նա ինքը նախ հասկանայ բնագրի լինակատար միտքը. ով հմուտ չէ սորա մէջ, նա կուտակում է միմեանց վերայ շատ բառեր, և անհետ յաւելուածներով միայն մընացնում է բնագրի պարզութիւնը: Եւ որչափ այսպիսի անպատճաստ և անխորհուրդ երկարաբանութիւններ պատահում է մեղ լսել ոչ միայն ուսումնաբաններում, այլ և եկեղեցւոյ մէջ

անգամ, եթէ որ այսպիսի մարդկը համեստութիւնից գոնէ ստիպեալ զապէին իւրեանց լեզուն այսպիսի անպատճառտ խօսելուց, մի՛ որ անյայտ կֆարը իւրեանց տիարութիւնը, և միւս՝ որ չէին շփոթել և ուրիշներին ևս: Այն բնագիրը, որը չես հասկանում, կարելի է նորա բացատրութիւնը թողնել: բայց նորան խանգարելուց վկո՞ի ի՞նչպէս պէտք է ուղղես գործը. հարկաւոր է կարգաւորել մի քանի աստիճաններ և նրանցով տանել աշակերտներին մինչ ի կատարեալ հասկացողութիւնը գրուածքի: Ինչ որ այսօր նոցա համար գժուար է թվում, այն պահի՞ր վաղուան համար:

Վերասացեալները բատ մեծի մասին վերաբերվում է Պատրնուիան, Եվբատիա Հրահան և հնախօսական նկատողութիւններին, որոնցով մեր ուսումնականները կամենալով պարծել, ընդհակառակն շատ անգամ ցուցանում են իւրեանց մանկավարժութեան անընդունակութիւնը: Այս օրինակ մեկնութիւնները չեն ներգործում առհասարակ բնագրին ներքին մաքի վերայ, այլ ընդհակառակն յետ են քաշվում ունկընդուդընի ուշադրութիւնը դիմաւոր գործից: Կարելի է հետաքրքիր երեխայի այս մասին առաջարկած հարցմունքներին պատասխանել, այնպէս ես կարելի է կրկնութեան կամ կարգացած անցածների քաղուածքի ժամանակ՝ նրան մասնաւոր տեղեկութիւն տալու համար նոյն օրինակ նկատողութիւններ անել: Բայց եթէ խորամուխլինք բնագրի իսկական մտքին՝ անտեղի են այսպիսի կողմնակի նկատմանքները: Զ.օ. ուր է գանվում Աւրհա\* աշխարհը,

Մեռեալ ծովը Միջերկրականից ցած է թէ ոչ. Պարսից ո՞ր թագաւորը անուանւեցաւ Եգասփիրոս ելն, ելն: Բայց աւելի օտարութիւնի է մի քանի կրօնուսոյցների և այն սովորութիւնը, որ իւրեանց դասերի հետ խառնում են և լեզուաքննական հետազօտութիւնները. յայտնի բան է, որ գժուարութիւնները պէտք է դիւրացնել օրինակական գարձուածները հասարակաց շննել, բայց գորա հետ միասին որոնել և բառերի արմատները. կրօնի դասի հետ խառնել և բառազննութիւն, այնպէս և ուղղագրական նկատմունք, այդ բոլորովին անտեղի է մինչև անգամ ցաւալի հարցաւեր հոգւոյ համար:

Խոկ ի՞նչ տեղ գործ ածել Ա-Եպեաց երիշի և դուռ նման օժանդակ գիտելիութ, որ ամենահարկաւորն է Աստուածաշնչի ուսման համար, նոքա պէտք է Աստուածաշնչի նշանաւոր տեղերը կարգալու ժամանակը օդնել. եթէ աշակերտը զիտէ թէ այժմ իւր գործն է կրօնի դալոց դասերի պատրաստութիւնը, հապա նա միմեանց հետ չի շփոթել երկու գործերը. նա կը ջանայ որոշել շնուածքի սեամը տանիցը: Մենք խորհուրդ չենք տալ առանձին գասեր նշանակել Աստուածաշնչի աշխարհագրութեան համար, որովհետեւ այսպիսի դէպքերում նորա դասատուները առհասարակ աւելորդաբար անցուցանում են սահմանը. բաց ի կարեոր խսկական նիւթից պարապում են և աւելորդներով, և դասատուութիւնը իւր կրօնական նշանակութիւնից դուրս դալով կորուսանում է Աստուածաշնչի ուսման յարդը: Այս պատճառաւ աւելի լաւ է մասն առ մասն բաժանել և իւրաքանչիւր պատմութեան

(\*) Եղեսիա:

վերաբերեալը նկարագրել նորա դասատը-  
ւութեան հետ զօր. Եղիպտոսոր՝ Խրա-  
յէլացւոց այն տեղից դուրս գալու պատ-  
մութեան հետ. Քանինացւոց երկիրը նը-  
կարագրել իրեւ ներածութիւն Յեսու  
Նեաւեայ գրքին. Ա երջին Պաղեսափինը՝  
Նոր Կտակարանը սկսելուց յառաջ և լն:  
Պաղեստինի այժմեան աւերակների մասին  
որպիսի և իցէ գէպքում յիշիր և վեր-  
ջապէս ընդհանուր նկատողութիւն արա  
այդ կողմերի համար՝ Երուսաղէմի աւե-  
րումը պատմելու ժամանակը: Արբազան  
պատմութիւնը ինքը առիթ է տալիս այս-  
պիսի դասակարգութեան, որովհետեւ նո-  
րա մէջ ևս վարդապետական յօդուածնե-  
րին հետեւում է պատմականը, ապա աշ-  
խարհագրականը և լն: Ա երջապէս այսպի-  
սի նկատողութեանց մեծ և կարեոր մասը  
թողնել պէտք է չորրորդ շրջանի համար,  
այս ինքն ուսումնարանական դասատուու-  
թեան վերջին երկու տարիների համար:

Դ. Չորրորդ շրջանի մէջ Աստուածա-  
շընչեց հաւաքածոյ փոքրիկ հատուածնե-  
րի փոխանակ առաջարկվում է ամրող Աստուածաշունչ գրքերի ընթերցումը,  
եթէ ոչ այնպէս, որ իւրաքանչիւր զիքը  
անշուշտ լրիւ կարդացուի, գոնէ այնպէս՝  
որ իւրաքանչիւր զրքից ստացուի նորա  
ամբողջութեան մասին գիտելիք: Այս  
պատճառաւ աւելորդ չեն այս տեղ և այս  
զրքերի ներածութիւնը առանց յաւե-  
լացնելու նոցա վերայ և զանազան ուսում-  
նական ենթագրութիւններ. բայց ամենա-  
կարեորն է այս տեղ սահմանել ընթերց-  
ւած զրքերը, որոշել նոցա մէջ եղած  
զիսաւոր Ճմաբտութիւնները երկրորդա-  
կաններից, ցոյց տալ կապը և առհասա-

բակ աշակերտին ծանօթացնել զրքի ող-  
ւոյն: Ա երոյիշեալ կերպով իւրաքանչիւր  
զիքը կարդալուց զինի պարտաւոր է ա-  
շակերտը ընթեռնուլ և միւս ի բաց թո-  
ղուածները խորհրդածութեամբ և խրա-  
տառութեամբ: Աստ այսմ երրորդ շրջանի  
համար մեր յառաջաղղրած ամեն կանոն-  
ները պէտք է կատարուին և չորրորդ շր-  
ջանում, և այն՝ խիստ ճշգութեամբ.  
Բարձրագոյն պարզութեան և կարգաւո-  
րութեան հետ միասին դասատուութիւնը  
պէտք է լինի և այնպէս բազմակողմանի,  
որպէս զի ապագայում կարողանայ աշա-  
կերտը իւր կեաքի ամեն անցքերը վարել  
Աստուածաշնչի Ճմաբտութեանց համե-  
մատ և դիմել գէպ ի բարձրագոյն նպատա-  
կը. ի հարկէ այս տեղ ամենեին անպատ-  
շաճ է արագավաղ ընթերցանութիւնը և  
ցամաք ու սառն մեկնութիւնը: Թա՞ղ ին-  
քը ուսուցիչը ոգեսորուի Աստուածաշնչի  
ոգւով, զգայ իւր սրբազան կոչումը վե-  
րածելու երեխաներին գէպ ի մի նոր աս-  
տիճան բարոյականութեան և առաջնոր-  
գելու նրանց գէպ ի երկնից Երքայութիւն:

Եաց ի պատմական գրքերից, որոնցից  
բոլոր Նոր Կտակարանքը և մեծ մասը կին  
Կտակարանի հարկաւոր են ուսումնարա-  
նում կարդալու համար, մանաւանդ յար-  
մար են Ասպառաները, Ասպառանի առաջները,  
Յեսուսայ, Ուլուտը, իսկ Նոր Կտակարանից  
Տիգոսի և Յահովոսը նույները. սակայն այս  
տեղ մեծ նշանակութիւն ունի նոյնպէս  
ուսուցչի առանձին սէրը գէպ ի մի նոր որ  
և իցէ զիքը, նա կգրաւէ նրանով իւր ա-  
շակերտներին ևս:

Եթէ անբաւական կլինի ժամանակը վե-  
րոյիշեալ կանոններով կարդալուն ամբողջ

գրքերը, պէտք է դարձեալ շարունակել հարկաւոր հատուածների ընտրութիւնը, ինչպէս եղել եր երրորդ շրջանում, միայն խիստ պահանջողութեամբ։ Այս տեղ կարելի է առարկաները բաժանել ըստ եկեղեցական տարւոյ \*), կամ ըստ տօնից. թէև այս կարգը բոլորովին արտաքին է, և հետեաբար հեշտ կարող է եկեղեցական կարգ անուանելու յարմարութիւն սահմանալ. ինքնակայ կարգը, որի նսպատակն է կրօնական կարգաւորապէս զարգացումը, ամենայն դէպքերում համապատասխան է մանկավարժութեան. ինչ ինչ մասեր կարելի է թողնել երիտասարդի ինքնակրթութեանը, ուսումնարանից դուրս գալուց յետոյ, այնու ամենայնիւ շատ էլ չէ կարելի հաւատալ նրանց. փորձը ցոյց է տալիս, որ ուսումնարանի մէջ աշակերտի սովորածները շատ անգամ ապագայում մոռացվում են քան թէ կատարելագործվում . . . : Ուսումնարանից շուտով արձակվելու և զարգացած մարդ համարվելու միտքը աշակերտների վրայ աւելի հզօր կերպով է ներգործում քան թէ հոգեւոր չօր խրատները։ Եթէ եկեղեցին և ուսումնարանը միացեալ զօրութիւնով չընդդիմործեն աշխարհի աւելիս ազդեցութեանը, այն ժամանակ մեր երիտասարդները չեն ունենալ դէպ ի կրօնը անձնագոհութիւն, և կրաւականանան կրօնի պահանջմանցը արտաքին կերպով միմիայն յարմարուելովը։ Այժմ մեր մէջ ես ան-

ցել է ուսումնարանից գալուց յետոյ եկեղեցական հրահանգաց արհամարհութիւնը իրուե մի հնացեալ բան, որը հարկաւոր է նորոգել այժմեայն ժամանակի մանկավարժական յառաջադիմութեան համապատասխանող փոխակերպութիւն տալով նորա դասատուութեանը, չեռի հին մեքենայական ձեւերից։ Աստուածաշնչելիթերցմունքը, հոգեւոր երգերի և խրատական հատուածների ստէպ գործածութիւնը, եկեղեցւոյ թէ հին և թէ նոր պատմութիւնները, միայն առանց վիճաբանութեան, աւելի օգտաւէտ են, քան թէ քըրիստոնէական վարդապետութեան մշարնչենաւոր սառն կրկնողութիւնը։ Մեր երիտասարդները լաւ պէտք է իմանան Աստուածաշնչը և կրօնը, ապա թէ ոչ մեր եկեղեցւոյ այժմեան շարժմունքը բարի վախճան չէ կարող ունենալ։

Թարգմանեաց

Սարգիս Պաղպաստը Ա. Պաղպաստը Եանց

—————

ՄԻ ԳՈՒԽԻ ԽՈՍՔ

. ԻՄ ԱԲԵՎԱՅՈՒԹԵԱՆ ԸՄԻԹՈՎ.

“Երարատի,, Փետրուարի ամսաթերթում տպած էր յայտարարութիւն չըրս նորընծայ Աքեղանիրի ձեռնադրութեան մասին. այդ չորսի մէջ էի և ես։ Աւարտելով այժմ քառասնօրիեայ պատրաստութիւնը և արժանանալով մատուցանել առաջին սուրբ Պատարաղը, կամենումեմ քանի մի խօսք ուղղել դէպ ի մեր աղքայնքը։

Վարդս՝ նախ քան թէ կգործէ մի այնպիսի քայլ, որը ծանրակշիռ հետեանք-

(\*) Երևի հեղինակը Ակեղեցական տարի,, անուանել է Եկեղեցւոյ “աւուր պատշաճի,, անւանեալ ընթերցուածոց և տօնից միանուագ շըրջանը»